ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 9-Ա « 03 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.04.2025թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-4» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 380.000 ՀՀ դրամ: Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանների խախտումներ, մասնավորապես.

Ըստ պայմանագրի, «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն պարտավորվել է, մինչև 2025թ.-ի մայիսի 26-ը մատակարարել գրասեղան 20 հատ, սակայն չի մատակարարել:

30.07.2025թ.-ին գրությամբ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքը ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանն անհրաժեշտ է պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ տալ

պարզաբանում և մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները, սակայն «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն ուղարկված գրությանն արձագանք չի տրվել: Արդյունքում՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2025թ.-ի օգոստոսի 20-ին, միակողմանի ամբողջությամբ լուծել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ի միջև 08.04.2025թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-4» ծածկագրով պայմանագիրը՝ 380.000 (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ն, սահմանված ժամկետում չի վճարել որակավորման և պայմանագրի ապահովման գումարներն, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետի՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին՝ «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» ԱՁ-ին, ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը Լուծելու վերաբերյալ Ծանուցումը Հրապարակելու Ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծածկագիրը | Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | Չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| **ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31** | **ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/31-4** | 6 | Գրասեղաններ | 1200000 | 380000 | «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ » ԱՁ | 26692443 | Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Թամանյան փողոց, տուն 5 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | 20.08.2025թ. | Պայմանագրի 2.1.7 կետը | - |

**ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**